ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. մայիսի 5-ից մայիսի 9-ը ք. Վիլնյուս (Լիտվայի Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Կարեն Թամազյան - ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ,
Գոհար Սահակյան - ՀՀ ՊԵԿ հետբացթողումային հսկողության և ստուգումների վարչության պետ,
Տիգրան Սարգսյան - ՀՀ ՊԵԿ հետբացթողումային հսկողության և ստուգումների վարչության պետի տեղակալ,
Կարեն Մովսեսյան ՀՀ ՊԵԿ հետբացթողումային հսկողության և ստուգումների վարչության մաքսային ստուգումների բաժնի պետ,
Հայկազ Քոչարյան - ՀՀ ՊԵԿ հետբացթողումային հսկողության և ստուգումների վարչության մաքսային գործարքների հսկողության և ռիսկերի վերլուծության բաժին պետ,
Արթուր Գևորգյան - ՀՀ ՊԵԿ հետբացթողումային հսկողության և ստուգումների վարչության մաքսային ստուգումների բաժնի պետի տեղակալ,
Հասմիկ Մինասյան - ՀՀ ՊԵԿ հետբացթողումային հսկողության և ստուգումների վարչության ընթացիկ մաքսային հսկողության բաժնի պետի տեղակալ,
Ռուզաննա Կուսիկյան - ՀՀ ՊԵԿ մաքսային ռիսկերի կառավարման և վիճակագրության վարչության պետի տեղակալի ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնող:

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Լիտվայի Հանրապետություն, ք. Վիլնյուս, մայիսի 5-ից 9-ը:

3. Հրավիրող կողմը՝

Լիտվայի Հանրապետության ֆինանսների նախարարությանն առընթեր Մաքսային վարչություն (Համաշխարհային Բանկի նախաձեռնությամբ):

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Այցը կազմակերպվել էր Համաշխարհային Բանկի կողմից Հայաստանի Հանրապետությունում իրականացվող «Հետբացթողումային հսկողության կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակներում:

Այցի նպատակն էր ծանոթանալ Լիտվայի Հանրապետության մաքսային մարմինների կողմից ապրանքների բացթողումից հետո իրականացվող մաքսային հսկողության և ստուգումների (աուդիտ) ընթացակարգերին և ծրագրերին, ռիսկերի կառավարման համակարգերին և ծրագրերին, ինչպես նաև՝ իրականացնել փորձի և գիտելիքների փոխանակում երկու երկրների մաքսային մարմինների ծառայողների միջև: Այն նպատակ ուներ Լիտվայի Հանրապետության մաքսային ծառայողների հետ հանդիպումների ընթացքում ստացված գիտելիքները և ներկայացված միջազգային փորձը տեսնել պրակտիկ կիրառման մեջ, ծանոթանալ դրանց նրբություններին, ստանալ պատասխաններ՝ պրակտիկ կիրառման ընթացքում ծագող հարցերի վերաբերյալ:

Այցը հիմնական նպատակն էր ձեռքբերված գիտելիքների և փորձի հիման վրա ՀՀ մաքսային մարմնի կողմից ապրանքների բացթողումից հետո իրականացվող մաքսային հսկողության և ստուգումների որակը համապատասխանեցնել Համաշխարհային Մաքսային Կազմակերպության կողմից սահմանված միջազգային ստանդարտներին:

5. Քննարկված թեմաները՝

Գործուղման օրակարգի համաձայն իրականացվել են այցելություններ Լիտվայի Հանրապետության մաքսային ծառայության տարբեր ստորաբաժանումներ, ուսումնասիրվել և քննարկվել են ապրանքների բացթողումից հետո Լիտվայի մաքսային մարմնի կողմից կիրառվող մաքսային ստուգումների, ռիսկերի կառավարման համակարգերը, դրանց բաղկացուցիչները, ինչպես նաև մաքսային հանցագործությունները հսկող ստորաբաժանման, կիրառվող մոտեցումները, ինչպես նաև մաքսային ստուգումների համար ռիսկերի կառավարման համակարգի վրա հիմնված ստուգման ենթակա ընկերությունների ընտրության, մաքսային ստուգման պլանների ձևավորման ընթացակարգերը:

Հատուկ ուշադրություն է արժանացել Արտաքին տնտեսական գործունեության սուբյեկտների նկատմամբ ապրանքների բացթողումից հետո իրականացվող տուգման նպատակով Լիտվայում ներդրված ծրագրային ապահովումների առանձնահատկություններին՝ առաջավոր փորձը Հայաստանի Հանրապետության մաքսային մարմնին վերապահված գործառույթների իրականացման շրջանակներում կիրառելու համար:

Ուսումնական այցի ընթացքում ներկայացվել են.

1. Լիտվայի մաքսային մարմինների կառուցվածքը, ստորաբաժանումների գործառույթների և լիազորությունների առանձնահատկությունները, պարտականություններն ու իրավունքները, դրանց հետագա զարգացման հեռանկարները,
2. Ապրանքների բացթողումից հետո իրականացվող հետբացթողումային հսկողությունը Լիտվայի մաքսային մարմիններում, հետբացթողումային հսկողության իրավական հիմքերը և ոլորտը կարգավորող օրենդրության հիմնական առանձնահատկությունները, մաքսային մարմինների պաշտոնատար անձանց իրավունքներն ու պարտայանությունները՝ մաքսային ստուգման ընթացքում:
3. Հետբացթողումային հսկողության համար իրականացվող ռիսկերի կառավարման համակարգը, ռիսկերի ձևավորմանը մասնակցող ռիսկերի խմբերը և դրա շրջանակներում իրականացվող գործընթացը, ռիսկերի արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը, դրանց աղբյուրները, տեղեկատվական համապատասխան շտեմարանից ստացվող տեղեկությունները, ռիսկի ոլորտները, ռիսկի ցուցիչները: Ռիսկերի գնահատման կանոնների համար կիրառվող դասակարգիչների ցուցակները:
4. Արտաքին առևտրով զբաղվող անձանց և ապրանքների հայտարարագրերի ռիսկերի բալային համակարգով գնահատման, ռիսկերի կառավարման և մաքսային ստուգման ՏՏ գործիքի ներկայացման շրջանակներում ուսումնասիրվել է համապարփակ ռիսկի գնահատումը, այդ թվում՝ պոտենցիալ ռիսկերի նույնականացումը, վերլուծությունը, գնահատումը և առաջնահերթությունների սահմանումը, ռիսկերի կառավարման համակարգից ապրանքների բացթողումից հետո իրականացվող հետբացթողումային հսկողության համար տեղեկատվության ստացումը:
5. Ապրանքների բացթողումից հետո իրականացվող մաքսային ստուգումների, ստուգման իրականացման նպատակով ԱՏԳ սուբյետների և ապրանքների հայտարարագրերի ընտրության, գործարքների վրա հիմնված թիրախավորման, ԱՏԳ սուբյեկտներ վրա հիմնված թիրախավորման և մաքսային ստուգման պլանի կազմման ընթացակարգերը և առանձնահատկությունները:
6. Մաքսային ստուգման գործընթացը, դրա ընթացքի արձանագրումը և արտացոլումը ՏՏ համակարգում, մաքսային ստուգման գնահատումը, ռիսկերի կառավարման ցուցումները, մաքսային ստուգման նախապատրաստումը, մաքսային ստուգման բոլոր ապացույցների արձանագրումը, մաքսային ստուգման վերաբերյալ զեկույցի (ներառյալ ԱՏԳ սուբյեկտների և ներքին օգտագործման համար նախատեսված զեկույցներ) կազմումը, ստուգվող անձի մնացորդային ռիսկի գնահատումը:

7. Տեղեկատվության փոխանակումը համապատասխան տեղեկատվական համակարգերի օգտագործմամբ, փոխհամագործակցությունը ԵՄ անդամ հանդիսացող, ինչպես նաև այլ երկրների հետ: Փոխհամագործակցությունը Լիտվայի մաքսային դեպարտամենտի այլ կառուցվածքային ստորաբաժանումների (մաքսային արժեք, մաքսային սակագին, ընթացակարգեր և այլն) ինչպես նաև հարկային մարմինների հետ:

8. Մաքսային հանցագործությունները հսկող մաքսային քրեական ծառայության կողմից մինչև ապրանքների բացթողումը իրականացվող մաքսային հսկողության գործառույթները, լիազորությունները և հսկողության ընթացակարգերը, դրանց իրականացումը պրակտիկ օրինակների վրա՝ առցանց ժամանականակում /ռապիսկան համակարգի ներկայացում/:

9. Մաքսային ստուգման հարցաթերթեր և ստուգաթերթեր, դրանց դերը մաքսային ստուգման ժամանակ, մաքսային ստուգման արդյունքների ամփոփում և դրանց վերաբերյալ տեղեկատվության փոխանցում ռիսկերի կառավարման համակարգին: SS համակարգի տարբեր հաշվետվություններ և զեկույցներ գեներացնելու հնարավորությունները:

10. Մաքսային ստուգում իրականացնող մաքսային ծառայողների պատրաստման և վերապատրաստումների ռազմավարությունը, վերապատրաստման կարիքների նույնականացումը, վերապատրաստման թեմաները և դրանց իրականացումը:

11. Լիազոր տնտեսական օպերատորների (LSO) գնահատում /մոնիտորինգ/ վերագնահատում, մատակարարումների շղթաների անվտանգության և հետագծելիության հսկողության կազմակերպումը:

12. Մաքսային ստուգման փուլերը, ընթացակարգերը (նախապատրաստում, իրականացում, հաշվետվության ներկայացում, ցեկույց, հետագա ընթացք)

13. Պրակտիկ դեպքերի քննարկում և վերլուծություն:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Սույն հաշվետվության 5-րդ կետում արտացոլված թեմաների շուրջ տեղի են ունեցել հանդիպումներ, ելույթներ և քննարկումներ Լիտվայի Հանրապետության մաքսային մարմնի տարբեր ստորաբաժանումների պաշտոնատար անձանց և Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության ներկայացուցիչների միջև: Վերը նշված հանդիպումներին մասնակցել են Համաշխարհային բանկի կողմից Ծրագրի ղեկավարը և մաքսային փորձագետը, Լիտվայի Հանրապետության մաքսային ծառայության ղեկավար կազմը, ինչպես նաև տարբեր մաքսային ստորաբաժանումների ղեկավարներ և մաքսային ծառայողներ:

Կազմակերպվել են այցելություններ՝ Լիտվայի Հանրապետության Ֆինանսների նախարարությանն առընթեր մաքսային վարչություն, SS վարչություն, մաքսային քրեական ծառայություն, մաքսային ուսումնական կենտրոն և Վիլնյուսի տարածքային մաքսային մարմին:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ընթացքում որոշումներ չեն ընդունվել, պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Այցելության արդյունքում՝ ՀՀ ՊԵԿ մասնակիցների կողմից բարձր է գնահատվել Համաշխարհային բանկի ծրագրի շրջանակներում՝ Համաշխարհային Բանկի նախաձեռնությամբ միջազգային տարբեր հարթակներում գործընկեր երկրների մասնագիտական կառույցների հետ հանդիպքումների, ոլորտային քննարկումների անցկացումը, մասնավորապես, մաքսային վարչարարության ոլորտում արդիական և նորարական մեխանիզմների ներդրման համատեքստում:

Միջոցառմանը մասնակցությունը թույլ տվեց ՊԵԿ ներկայացուցիչներին անմիջականորեն տեսնել մաքսային հսկողության շրջանակներում Լիտվայի մաքսային մարմնի կողմից իրականացվող հսկողական գործառույթերի իրականացման ընթացակարգը, հարցեր ուղղել և ստանալ պատասխաններ՝ լիազորությունների իրականացման առանձնահատկությունների, ներդրված մաքսային հսկողական համակարգերի գործածման ընթացակարգերի վերաբերյալ, ծանոթանալ հետբացթողումային հսկողության համար իրականացվող ռիսկերի կառավարման համակարգի, դրա միջոցով ռիսկերի ձևավորման և գնահատման, ապրանքների բացթողումից հետո մաքսային ստուգումների իրականացման գործընթացին:

Ստացված տեղեկությունները և միջազգային փորձը պետք է բարձրացնեն ՀՀ ՊԵԿ-ում կատարվող համապատասխան աշխատանքների որակը, վերը նշված փորձը ՀՀ մաքսային մարմնում ներդրելը ավելի արդյունավետ կդարձնի մաքսային հսկողության շրջանակներում իրականացվող աշխատանքները, հաստատել միջազգային կապեր համապատասխան ոլորտի օտարերկրյա գործընկերների և փորձագետների հետ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Կարեն Թամազյան ----------

Գոհար Սահակյան ----------

Տիգրան Սարգսյան ----------

Կարեն Մովսեսյան ----------

Հայկազ Քոչարյան ----------

Արթուր Գևորգյան ----------

Հասմիկ Մինասյան ----------

Ռուզաննա Կուսիկյան ----------

13.05.2024թ.